

# ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՁԵՌԱՏԵՏՐ

Նախաձեռնությամբ՝  
Կիպրահայ Համայնքի  
Երեսփոխանական Գրասենեակի

Համադրում՝  
Տարեցներու Խորհրդարանի  
Երեսփոխան եւ փոխ-երեսփոխան  
Տիկիններ Անահիտ Էսփիճեան  
եւ Էլսի Իւթիւճեան

Յունարէն Թարգմանութիւն՝  
Պրն. Արիս Իւթիւճեան

Նիկոսիա 2008

## Բովանդակություն

Պատմական Ակնարկ	3
1. Աշխատանքային եւ Ընկերային Ապահովագրութեան Նախարարութիւն	8
ա. Ընկերային Բարօրութեան Սպասարկութիւն	8
բ. Ընկերային Ապահովագրութեան Բաժանմունք	16
2. Ելեւմտական (Տնտեսական) Նախարարութիւն	19
3. Առողջապահութեան Նախարարութիւն	20
4. Ներքին գործոց Նախարարութիւն	22
ա. Քաղաքաշինութեան եւ բնակութեան բաժանմունք	22
բ. Տեղահաններու եւ վնաս կրողներու օգնութեան սպասարկութիւն	22
գ. Տեղահաններու եւ հայրենադարձներու վարձքի նպաստ	23
5. Կրթական եւ Մշակոյթի Նախարարութիւն	24
ա. Չարգացման կեդրոններ	24
բ. Մշակութային սպասարկութիւն	25
6. Պաշտպանութեան Նախարարութիւն	26
7. Մարդասիրական Հարցերու Խնամատարի Գրասենեակ	26
8. Կիպրոսի Քաղաքապետներու Միութիւն	27
9. Կիպրոսի Համայնքներու Միութիւն	28
10. Կարելոր Զեռաձայններու Թիւեր	30

## Պատմական Ակնարկ

1973-ին Կամաւորներու Յանձնախումբերէ կազմուած մարմին մը հիմնուեցաւ «Համակիպրական Բարօրութեան Խորհուրդ» անունով, օգտակար ըլլալու Կիպրական կառավարութեան կենցաղային հարցերուն:

1989-ին կառավարութիւնը տեսնելով խորհուրդին տարած օգտաշատ աշխատանքը եւ ճանչնալով անհրաժեշտութիւնը այդ մարմինին՝ նոր օրէնքով մը թափ եւ ուժ տուաւ անոր որպէսզի տարած աշխատանքը ըլլայ աւելի արդիւնաւոր եւ հանրութեան օգտակար:

Իսկ 2006-ին «Համակիպրական Համագործակցական Կամաւորներու Խորհուրդ»ը նոր օրէնքով՝ նոր աշխատելակերպ, նոր իրաւասութիւններ եւ նոր պատասխանատուութիւններ ստացաւ:

Այժմ խորհուրդը ունի 6 նահանգային համագործակցական կամաւորներու մարմիններ, 270 տեղական անդամ կազմակերպութիւններ եւ 42 համակիպրական կամաւորներու կազմակերպութիւններ, 350 ընկերային ծրագիրներով՝ որոնք կը ծառայեն ժողովուրդին ընկերա-տնտեսական հարցերուն:

Այս կամաւորներու կազմակերպութիւնները կ'աշխատակցին եւ կը մասնակցին նաեւ «Եւրոպական Յանձնախումբ»ի ծրագիրներուն:

Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը (ՄԱԿ) 17 Դեկտեմբեր 1985-ին նշանակած է 5 Դեկտեմբերը որպէս «Կամաւորներու Միջազգային Օր» իսկ 1994-ին Համակիպրական Կամաւորներու Խորհուրդը նշանակած է «Կամաւորութեան Շաբաթ»ը: 2007-ին այդ շաբաթը կատարուեցաւ Կիպրոսի Նախագահին հովանաւորութեամբ, ճոխ հանդէսներով եւ ձեռնարկներով Կիպրոսի բոլոր քաղաքներուն մէջ 3-10 Դեկտեմբերին, «Կամաւոր մատուցում հաւասար առիթներու եւ իրաւունքներու համար» նշանաբանով:

Այս կամաւորներու խորհուրդի կազմակերպութիւններէն մէկն է «Տարեցներու Խորհրդարան»ը, որ հիմնուած է 1999-ին: Ունի 56 անդամներ որոնցմէ իւրաքանչիւրը կը ներկայացնէ տարբեր համակիպրական կազմակերպութիւն մը: Խորհուրդը կը զբաղի Կիպրացի տարեցներու կեանքի որակի բարելաւումով: Կը բաղկանայ երկու բաժիններէ. առաջինը՝ առողջապահական եւ հաղորդակցական, երթելեկի, փոխադրական միջոցներու իսկ երկրորդը՝ ընկերային հոգատարութեան:

Խորհուրդը լրջօրէն կ'աշխատի պաշտպանել շուրջ 120,000 Կիպրացի հանգստեան կոչուած տարեցներու բոլոր իրաւունքները:

1990-ին ՄԱԿ-ը «Տարեցներու Օր» նշանակած է 1 Հոկտեմբերը:

2007 Օգոստոսէն ի վեր Կիպրոսի Հայ գաղութը վերընտրուած է անդամ այս խորհուրդի առաջին բաժինին: Խորհուրդը ունեցած է 8 մասնակի ժողովներ, հանդիպում մը բժիշկներէ կազմուած «Խորհրդարանի Առողջապահական Մարմին»ին հետ, նաեւ տարեկան ընդհանուր ժողովը՝ տարեցները յուզող եւ հետաքրքր-

քրող սիւթերու մասին խորհրդակցելու եւ ներկայացնելու առաջարկներ կառավարութեան՝ խնդրելով անոնց շուտափոյթ լուծումը:

Շաբաթ, 10 Նոյեմբեր 2007-ին Տարեցներու Խորհրդարանի իններորդ նիստը գումարուեցաւ խորհրդարանին մէջ, նախագահութեամբ Խորհրդարանի Նախագահ Պրն. Տիմիթրիս Խրիստոֆիասի (Կիպրոսի Նորընտիր Նախագահ):

Ժողովին ներկայ էին եւ խօսք առին նաեւ Առողջապահութեան նախարար՝ Պրն. Կոստաս Քատիս եւ Աշխատանքային ու Ընկերային Ապահովագրութեան նախարար Տօքթ. Անտոնիս Վասիլիու: Երկու նախարարներն ալ վստահեցուցին, թէ պետութիւնը միշտ պատրաստ է զօրավիգ կանգնելու տարեցներուն, առաւել եւս ամէն ջանք թափելու անոնց ընդհանուր ապրելակերպը բարելաւելու համար:

Պրն. Քատիս յայտարարեց, թէ կառավարութիւնը արդէն իսկ աշխատանք կը տանի տարեցներու յատուկ դարմանատուներ հաստատելու, որպէսզի տարեցները երկար ժամանակ չպահուին հիւանդանոցներուն մէջ, երբ անհրաժեշտ չէ իրենց կեցութիւնը:

Կամաւորներու Խորհուրդի նախագահ Պրն. Ստաւրոս Օլիմպիու ջերմօրէն խնդրեց որ կարելի եղածին չափ շուտ իրականացուի «Ազգային Ծրագիրը» ի նպաստ տարեցներուն:

Չոյգ նախարարները խոստացան աւելի մեծ թափով աշխատիլ Կիպրացի երեցներուն ի նպաստ՝ երկրին տնտեսական կարելիութիւններուն ներած սահմաններէն ներս:

Տարեցներու Առողջապահութեան եւ Զաղորդակցութեան Յանձնախումբը 26 Մարտին շնորհաւորական

Նամակներ դրկեց, նորընտիր Առողջապահության նախարարին և Հաղորդակցության նախարարին, խնդրելով որ տարեցները հետաքրքրող և մտահոգող հարցերը, որոնք Տարեցներու 9-րդ Ընդհանուր Ժողովի ընթացքին առաջարկուած էին, նկատի առնուին և մօտալուտ հանդիպումներով բոլորը լուծուին:

Կիպրոսի այսօրուայ ժողովրդագրական կացութիւնը նման Եւրոպական երկիրներու մեծամասնութեան, կը յատկանշուի ծնունդներու թիւին նուազումով և երկարակեցութեան աճումով: Ասոր իբր հետեւանք տարեցներու թիւի համեմատութիւնը կը բարձրանայ ընդհանուր բնակչութեան թիւի բաղդատմամբ: Այս փոփոխութեան պատճառը, ընկերային և տնտեսական զարգացումը, կեանքի մակարդակի վերելքը և առողջապահական սպասարկութեան բարելաւումն է:

1973-ին այր մարդոց միջին կեանքի տեւողութիւնը մինչեւ 70 տարի կը հասներ իսկ կիներունը մինչեւ 72.9 տարի, իսկ 1998-99 շրջանէն ետք, համապատասխան տարիքները 75.3-ի և 80.4-ի բարձրացան:

Ժողովուրդին երկարակեցութեան երեւոյթը կը պահանջէ զանազան սպասարկութիւններ, որպէսզի ընդհանուր լուծում տրուի տարեցներու պետքերուն և դժուարութիւններուն, նկատի ունենալով ուրոյն պայմանները, միշտ ջանալով իրենց կեանքի որակը բարելաւել:

Աշխատանքային և Ընկերային Ապահովագրութեան Նախարարութեան միջոցաւ, կառավարութիւնը մասնաւոր կարեւորութիւն տուած է բնակչութեան այս հատուածին և կարելոր ծրագիրներ գործադրած է, որպէսզի «երրորդ տարիքին» հասածներուն Էական և ինքնայատուկ պետքերը գոհացնէ:

Նախարարաց Խորհուրդի որոշումով կազմուած Է Տարեցներու Համագործակցական Մարմինը, Աշխատանքային եւ Ընկերային Ապահովագրութեան նախարարին նախագահութեամբ եւ «տարեցներու նպաստներ»ը պատրաստած:

Մենք այս գրքոյկով կը փորձենք ամփոփել այդ «տարեցներու նպաստներ»ը, առաջադրուած ծրագիրները եւ սպասարկութիւնները, օգտակար ըլլալու մեր համայնքի տարեց անդամներուն:

Կը յուսանք նաեւ 2008-ի վերջաւորութեան, «Իւթիւճեան» սրահին մէջ կազմակերպել հանդիպում մը մասնագետ անձերու հետ, որոնք պիտի պատասխանեն եւ լուսաբանեն Հայ տարեց թոշակառուն մտահոգող բոլոր հարցերուն:

***Այս գրքոյկի կառավարական նպաստներու մանրամասնութիւնները ներկայ օրէնքներուն համաձայն գրուած են եւ ենթակայ են փոփոխութեան:***

## 1. Աշխատանքային եւ Ընկերային Ապահովագրության Նախարարություն

### **ա. Ընկերային Բարօրության Սպասարկություն**

#### **1. Հանրային Օգնություն**

Օգնություն կը տրուի, ըլլայ դրամական ըլլայ սպասարկութեան ձեւով, Կիպրոսի իւրաքանչիւր օրինաւոր եւ իրաւատէր բնակիչին, որուն եկամուտը ըստ Հանրային Օգնութեան եւ Սպասարկութեան Օրէնքի սահմանումին, անբաւարար է իր եական եւ մասնաւոր պէտքերը գոհացնելու:

Հանրային Օգնութիւնը հետեւեալ ձեւերով կրնայ տրուիլ

- Ամսական յատկացում եական պէտքերու համար
- Մասնաւոր պէտքերու յատկացում
  - Վարձքի յատկացում
  - Սնունդի յատկացում
  - Անձնական բնակարան ապահովելու համար տոկոսով պարտքի տակ եղողներուն յատկացում կամ օգնութիւն
    - Ջեռուցումի յատկացում
    - Անձնական յաւելեալ յատկացում
    - Քաղաքապետական եւ այլ տուրքերու յատկացում
    - Բացառիկ անձնական պարագաներու մասնաւոր յատկացում

- Դրամական օգնություն, ինամք ապահովելու համար

## **2. Տուներեն ներս ինամքի ծրագիր**

Տարեցներ կամ հաշմանդամներ որ հանրային նպաստի իրաւունք ունին, ինչպէս նաեւ ընտանիքներ որ մասնաւոր պետքեր ունին, իրենց տուներեն ներս ինամք կը ստանան, կառավարական կամ անձնական ինամողներու կողմէ:

## **3. Ցերեկեայ ինամքի ծրագիր**

Այս ծրագիրին շնորհիւ, տարեցներուն եւ հաշմանդամներուն առիթը կ'ընծայուի օրուան ընթացքին ինամուելու ծերանոցներէ կամ չափահասներու կեդրոններէ ներս:

## **4. Հաստատութիւններէ ներս ինամք**

Պետական ծերանոցներուն շնորհիւ, հոն գտնուողները կը վայելեն ապահով երդիք, սնունդ, ինամք, զբաղում եւ ժամանց, թէ հաստատութիւններեն ներս, թէ անոնցմէ դուրս իրենց պետքերուն եւ վիճակին համաձայն: Հոն կը քաջալերուին ընկերային կապերը ազգականներու եւ ուրիշներու հետ եւ անձնական ազատութիւն կը վայելեն իրենց կրօնքին հետեւելու: Եօթը պետական ծերանոցները հետեւեալներն են՝ 2 Նիկոսիա, 2 Լիմասոլ, 2 Լառնաքա եւ 1 Փաֆոս:

## **5. Չափահասներու կեդրոններ**

Չափահասներու կեդրոնները, որ ընկերային բարօրութեան ենթակայ են, օժանդակութիւն կը ստանան Պետական Յատկացումներու Ծրագիրեն, տարեց եւ

հաշմանդամ անձերու զանազան ծառայութիւններ կը մատուցանեն օրուան ընթացքին, ինչպէս ճաշ, հագուստներու լուացք, զբաղում եւ ժամանց:

### **6. Բնակութեան պայմաններու բարելաւման ընկերային նպաստի ծրագիր**

Ծրագիրին նպատակը, անհատներու եւ ընտանիքներու (որոնք արդէն հանրային նպաստ կը ստանան) տնտեսապէս օժանդակել է, որպէսզի կարենան իրենց բնակարաններուն փոփոխութիւններ եւ յաւելումներ կատարել, իրենց բնակութեան պայմաններուն բարելաւման համար:

### **7. Օգնութեան ծրագիր որպէսզի ընտանիքներ կարենան իրենց տարեց եւ կամ հաշմանդամները խնամել**

Ծրագիրին նպատակը տնտեսապէս օժանդակել է այն անհատներուն եւ ընտանիքներուն, որոնք տարեց կամ հաշմանդամ անհատներ ունին, որպէսզի այս անհատները կարենան խնամուիլ ըլլայ իրենց տուներէն ներս, ըլլայ ազգականի մը կամ բարեկամի մը տունը, որպէսզի չստիպուին զիրենք հաստատութիւններու մէջ տեղաւորել:

### **8. Տարեցներու եւ հաշմանդամներու (որ հանրային նպաստ կը ստանան) օդափոխութիւն ընելու օժանդակութեան ծրագիր**

Ծրագիրին նպատակը 63 տարեկանէն վեր տարեցներուն եւ հանրային նպաստ ստացող հաշմանդամներուն օժանդակելն է, տարուան որեւէ շրջանին պանդոկներու կամ Կիպրոսի տարբեր վայրերու մէջ վեց

օրուան կեցութեանը:

### **9. Տարեցներու անձնական գործ բանալու օժանդակութեան ծրագիր**

Ծրագիրին նպատակը 63-էն վեր եղող անհատներուն օգնելն է, որպէսզի կարենան դարձեալ աշխատիլ զիրենք հետաքրքրող գործով եւ իրենց կարողութեան համաձայն:

### **10. Տարեցներու հարցերով զբաղող մարմիններ**

Յետեւեալ մարմինները կը զբաղուին տարեցներու հարցերով.-

#### ա. Տարեցներու հարցերուն քաղաքականութեան բարձրագոյն մարմին

Կը բաղկանայ Ելեւմտական, Առողջապահութեան, Աշխատանքային եւ Ընկերային Ապահովագրութեան, եւ Ծրագրումի Սպասարկութեան Ընդհանուր Տնօրէններէն, նախագահութեամբ՝ Աշխատանքային եւ Ընկերային Ապահովագրութեան նախարարին: Իրաւասութիւնը ունի ուղղելու քաղաքականութիւնը եւ ծրագիրները, որոնց նպատակակէտը տարեցներուն կեանքի մակարդակին բարելաւումն է:

#### բ. Տարեցներու համագործակցական մարմին

Այս մարմինին նախագահը Աշխատանքային եւ Ընկերային Ապահովագրութեան նախարարն է: Այս մարմինին կը մասնակցին պաշտօնական այլ պատասխանատուներ, որոնք լիազօրութիւնը ունին ուսումնասիրելու տարեցներուն պետքերն ու հարցերը եւ հարկ եղած քայլերը առաջադրելու անոնց լուծման համար:

գ. Տարեցներու խորհրդատու մարմին

Այս մարմինը ծերանոցներու եւ հաշմանդամներու վերաբերեալ օրէնքին հիման վրայ կազմուած է: Ժողովները կը կատարուին Ընկերային Բարօրութեան տնօրէնութեան նախագահութեամբ: Մարմինը 11 անդամ ունի, առնչակից պետական ներկայացուցիչներէ, կամաւոր եւ այլ խումբերէ (ներառեալ տարեցներու կազմակերպութիւններէ) կը բաղկանայ: Այս մարմինը պաշտօն ունի նախարարին թելադրութիւններ ընելու օրէնքին տրամադրութիւններուն իրագործման համար:

***Ծանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել հետեւեալ ճրջանային Բարօրութեան գրասենեակներուն.-***

<b><i>Նիկոսիա</i></b>	<b><i>հեռ. 22-804608</i></b>
<b><i>Լիմասոլ</i></b>	<b><i>հեռ. 25-804450</i></b>
<b><i>Լառնաքա</i></b>	<b><i>հեռ. 24-800000</i></b>
<b><i>Փաֆոս</i></b>	<b><i>հեռ. 26-821611</i></b>
<b><i>Փարալիմնի</i></b>	<b><i>հեռ. 23-811720</i></b>
<b><i>Փոլիս Խրիստիոս</i></b>	<b><i>հեռ. 26-321441</i></b>
<b><i>Էվրիխու</i></b>	<b><i>հեռ. 22-870582</i></b>

**Նիկոսիոյ Ցերեկեայ Հոգատարութեան Կեդրոն -  
Հանգստեան Տուն  
(Nicosia Day Care Centre - Rest Home)**

2007 Դեկտեմբերին պաշտօնական բացումը կատարուեցաւ «Տարեցներու Ցերեկեայ Հոգատարութիւն» հաստատութեան Ֆամակուսթա Դուռին կից հանգստեան տունին մէջ, կազմակերպուած Նիկոսիոյ քաղաքապետարանին կողմէ, Եւրոպական Միութեան եւ Կիպրոսի կառավարութեան դրամական միացեալ օգնութեամբ:

Նիկոսիոյ քաղաքացի 65 տարիքը ամբողջացուցած անձիք կրնան օգտուիլ այս դրութենէն, շաբաթը 5 օր:

Հաստատութիւնը կը հրամցնէ նախաճաշ եւ ճաշ: Առաւել, առողջապահական եւ յարմար մտային զբաղումներ կը տրամադրէ տարեցներուն, ապահովելով անոնց փոխադրութիւնը: Իւրաքանչիւր անձի տարեկան վճարումը 8.50 Եւրօ է, իսկ օրականը՝ 2 Եւրօ:

Այս կարգադրութիւնը եղած է տարեցներուն հոգատար հարազատներուն կարելիութիւն տալու, որ անոնք կարենան վերադառնալ իրենց աշխատանքներուն:

Այս դրութենէն զատ կայ նաեւ «Տան հոգածութեան ծառայութիւն»ը: Ժամական 7 Եւրօ վճարելով կրնանք ունենալ փորձառու, վարժ անձեր, որոնք տուն կը մաքրեն, շուկայի գնումները կը դասաւորեն, հաշուեցոյցերը (bills) կը վճարեն, բժիշկի այցելութեան ժամանակ կ'ընկերանան տարեցներուն, ինչպէս նաեւ լրգանքի եւ լուացքի պարտականութիւնները յանձն կ'առնեն:

**Ծանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Կեդրոնի հեռ. 22-877878**

## Համայնքային Ճառայութիւն Տուներէ Ներս

Փորձառու անձեր կ'այցելեն տուներ եւ օգտակար կ'ըլլան տարեցներուն, բժիշկին խնդրագիրին համաձայն:

Նիկոսիոյ Հին Հիւանդանոց  
Հեռ. 22-801400

Ստրովուլոսի Կեդրոն  
Հեռ. 22-871870

Լիմասոլ - Կիպերունտայի Հիւանդանոց  
Հեռ. 25-806767

\*\*\*\*\*

Տարեցներու Հոգատարութեան Օգնական Անձեր (Caretaker for elderly people) կրնանք բերել առանց դժուարութեան, եթէ տարեց անձերը 75 տարեկանէն վեր են: Տարիքով աւելի փոքր անձերու համար բժիշկէն յատուկ թելադրական նամակով մը արտօսութիւն կրնանք ստանալ:

Անձերը որոնք կը ղրկուին փորձառու են եւ իրենց երկիրներէն դուրս աշխատած՝ իբրեւ տարեցներու հոգատար:

Այս անձերը տունի ամեն տեսակ աշխատանք կը տանին: Ճաշերու պարագային, անոնք կը հետեւին մեր ցուցմունքներուն եւ կը պատրաստեն մեր տարեցներուն յարմար կերակուրներ:

Սովորաբար երկու տարուան պայմանագիր կը տրուի, ապա երկու տարի եւս կը նորոգուի անոնց կեցութիւնը: Կրնանք նաեւ մինչեւ չորս տարուան պայ-

մանագիր ստանալ: Չորրորդ տարիէն ետք, պայմանագիրը կը նորոգուի տարուէ տարի: Տարեցներու պարագային կարելի է նոյն անձը խնդրել եւ պահել զայն իբրեւ հոգատար:

Այս անձերը կը մնան մեր յարկէն ներս եւ օգտակար կ'ըլլան մեր տարեցներուն: Շաբաթը մէկ, Կիրակի օր արձակուրդ կ'ունենան:

\*\*\*\*\*

Եթէ պետք ունենաք հաշմանդամի անհւաւոր աթոռ (wheelchair) բժիշկի թելադրութեամբ, կը լեցնէք հարկ եղած դիմումնագիրը եւ առանց վճարումի ձեզի փոխ կը տրուի անհւաւոր աթոռը, նոյնիսկ տարուան մը համար:

***Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել  
հեռ. 22-871300***

Իսկ եթէ կը փափաքիք անհւաւոր աթոռ մը վարձել, Կարմիր Խաչը պզտիկ ամսականով մը կը տրամադրէ հաշմանդամի աթոռ:

***Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել  
հեռ. 22-446959***

## **բ. Ընկերային Ապահովագրության Բաժանմունք**

### **1. Ծերութեան թոշակ**

Բոլոր անոնք որոնք Ընկերային Ապահովագրության Ծրագիրով ապահովագրուած են եւ ըստ անոր օրէնքներուն պայմանները գոհացուցած՝ իրենց բաժանորդագրութիւններով, իրաւունք ունին ծերութեան թոշակ ստանալու:

Թոշակ ստանալու տարիքը 65 է թէ այր մարդոց եւ թէ կիներուն: Թէեւ ապահովագրուած անձ մը իրաւունքը ունի ծերութեան թոշակ ստանալու 63 տարեկանէն սկսեալ, պայմանաւ որ լրացնէ յաւելեալ ուրիշ նախապայմաններ, իր բաժանորդագրութիւններուն նկատմամբ: Մինչ 65 տարեկանին թոշակ ստանալու իրաւունք ապահովելու համար կը պարտի ապահովագրուած ըլլալ, լման ապահովագրութեան տեւողութեան գոնէ 25%: 63 տարեկանին թոշակ ստանալու համար, կը պարտի ամբողջացուցած ըլլայ ապահովագրութեան շրջան մը որ լման ապահովագրութեան 70%ին կը հասնի:

Յանքագործներուն պարագային թոշակ ստանալու տարիքը կրնայ 58 տարեկանի իջնել, նկատի առնելով իրենց հանքի մէջ աշխատած շրջանին տեւողութիւնը:

### **2. Այրիներու թոշակ**

Այրիութեան թոշակ ստանալու իրաւունք ունին այն այրի կիները, որոնց ամուսինները իրաւունք պիտի ունենային ծերութեան թոշակի՝ իրենց մահուան թուականին կամ եթէ գոհացուցած էին թոշակ ստանալու իրենց բաժանորդագրութեան պայմանները: Այրիու-

թեան թոշակ ստանալու պայման մը եւս կայ՝ որ հետեւեալն է, մինչեւ ամուսինին մահուան օրը եթէ միասին կ'ապրէին, կամ հակառակ պարագային եթէ ամուսինը ամբողջովին կամ մասամբ ընտանիքին ապրուստը կը հոգար:

Այրիութեան թոշակի իրաւունք ունին նաեւ այրի մարդիկ, որոնք մնայունօրէն հաշմանդամ են, անկարող ինքզինքնին հոգալու եւ որոնց ապահովագրուած կիները կը խնամէին զիրենք մինչեւ կիներուն մահուան թուականը:

Ապահովագրուած կին մը իրաւունք ունի վճարուելու միաժամանակ թէ՛ իր սեփական ծերութեան թոշակը (իւր ապահովագրութեան հիման վրայ) եւ թէ իր մահացած ամուսնոյն այրիութեան թոշակը:

### 3. Ընկերային թոշակ

Յետեւեալ անձերը իրաւունք ունին ընկերային թոշակ ստանալու.-

ա. 65 տարեկանէն վեր

բ. Կիպրոսի մէջ կեցութեան որոշ պայմաններ ամբողջացնողներ այսինքն՝ 40 տարեկանէն յետոյ 20 տարի օրինաւոր կերպով Կիպրոս ապրողներ, իսկ 18 տարեկանէն յետոյ ընդամենը 35 տարի օրինաւոր կերպով Կիպրոս ապրողները:

գ. Իրաւունք չունին թոշակի կամ ուրիշ աղբիւրէ նման վճարումի, որուն գումարը հաւասար կամ անելի է Ընկերային թոշակի ամսականէն:

#### 4. Ընկերային քարոզ

Ընկերային քարոզը կը հայթայթուի իւրաքանչիւր անձի, որ 63 տարեկանէն վեր է եւ անոր շնորհիւ կարելիութիւնը կը տրուի մշակութային ձեռնարկներու մասնակցութիւնը եւ կարգ մը առաւելութիւններ վայելելու, ինչպէս օրինակ քաղաքներէն ներս եւ գիւղական շրջանները պաստրով անվճար ճամբորդելը:

***Ծանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել՝ Աշխատանքային եւ Ընկերային Ապահովագրութեան Նախարարութեան, ընկերային ապահովագրութեան բաժանմունքին հեռ. 22-401600***

\*\*\*\*\*

Նորընտիր Աշխատանքային Նախարար Տիկին Սոտիրուլլա Խարալամպուս եւ Ելեւմտական (Տնտեսութեան) Նախարար Պրն. Խարիլաոս Ստաւրակիս Մարտ 20-ին յայտարարեցին, թէ նոր կառավարութեան նախընտրական շրջանի խոստումը յարգելով, Յունական Սուրբ Յարութեան տօնին, 33 միլիոն եւրօ պիտի բաժնեն 112.300 թոշակառուներու: 98.800 անձեր արդէն ստացան 300.80 եւրօ, որ նուազագոյն գումարն է որ կը վճարուի տարեց Կիպրացի թոշակառուն, իսկ 14.600 հոգի, որոնք սատարած չեն ընկերութեան ապահովագրութեան հիմնադրամին, ստացան 286.64 եւրօ:

Այս յայտարարութիւնը եւ տրուած գումարները կը վերաբերին միայն 2008-ին, թէեւ կարելիութիւնը կայ որ նման կարգադրութիւն մը վաւերացուի յառաջիկային:

## 2. Ելեմտական (Տնտեսական) Նախարարություն

### **Մասնաւոր նպաստ կոյրերու**

18 տարեկանէն վեր կոյրերը իրաւունք ունին տարեկան 3,075.48 եւրօ նպաստի:

***Ծանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Ելեմտական նախարարութեան հեռ. 22-803577, 22-804000, 22-804050***

Տկար տեսողութիւն ունեցող անձեր, կրնան յատուկ օգնութիւն ստանալ կառավարութենէն բժիշկի թելադրութեամբ:

Կրնան դիմել կոյրերու վարժարան եւ օգնութիւն ստանալ իրենց դժուարութեան համար:

Կրնան նաեւ տարեկան պզտիկ գումար մը վճարելով անդամակցիլ եւ օգտուիլ կոյրերու յատուկ ծրագիրներէն եւ յատուկ վաճառատունէն:

***Ծանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել կոյրերու վարժարան հեռ. 22-403300***

### **3. Առողջապահության Նախարարություն**

#### **1. Անվճար բժշկական խնամք**

ա. Անվճար բժշկական խնամք կը տրուի հետեւեալներուն.- Պետական աստիճանաւորներուն, խորհրդարանի անդամներուն, կառավարական պաշտօնեաներուն, կառավարական բանուորներուն, կառավարական թոշակառուներուն, զինուորներուն, զանազան համալսարան յաճախող ուսանողներուն, զանազան բարեսիրական հաստատութիւններու մէջ գտնուողներուն եւլն.

բ. Բազմազաւակ ընտանիքներուն

գ. Այն անձերուն, որոնց տարեկան եկամուտը 15,377.41 եւրոյէն աւելի չէ եւ այն ընտանիքներուն, որոնց տարեկան եկամուտը 30,754.83 եւրոյէն աւելի չէ: Երկրորդ պարագային, ծնողքէն տնտեսապէս կախեալ իւրաքանչիւր զաւակին համար 1,708.60 եւրո կ'աւելցուի վերոյիշեալ գումարին վրայ:

#### **2. Զեղչուած սակով բժշկական խնամք**

Զեղչուած սակով բժշկական խնամք կը տրուի այն անձերուն, որոնց տարեկան եկամուտը 15,377.41ի եւ 20,503.22 եւրոյի միջեւ կը գտնուի եւ այն ընտանիքներուն, որոնց տարեկան եկամուտը 30,754.83ի եւ 37,589.23 եւրոյի միջեւ է:

Առողջապահական դարմանումի քարոզը նորոգելու համար պարտինք ամբողջացնել մեզի տրուած դիմումնագիրը: Դիմումնագիրին պէտք է կցենք մեր ստացած տարեկան Ընկերային Ապահովագրութեան հաշուեցոյցը կամ դրամատունէն՝ մեր ստացած թոշակին պատճենը:

Եթե սուղ եւ յատուկ դեղ մը յանձնարարուի հիւանդանոցի բժիշկին կողմէ, որ կառավարական հիւանդանոցին դեղարանը չի կրնար հայթայթել կամ չի կըրնար փոխարինել նմանօրինակ դեղով մը, բժիշկէն ապահովուած յատուկ դեղագիրով մը, այդ դեղը կը գնուի անձնական դեղարանէ մինչեւ 40% զեղչով, որու տարբերութիւնը կ'ամբողջացնէ կառավարութիւնը: Այս օգնութիւնը կը կոչուի մասնակի վճարում (co-payment):

### 3. Ապահովագրութեան Եւրոպական Քարդ

Ճամբորդելէ առաջ ձեր իրաւունքն է դիմել եւ ստանալ «Հիւանդի ապահովագրութեան Եւրոպական քարդ» կառավարական հիւանդանոցի կամ Առողջապահական Նախարարութեան միջոցաւ: Եթե Կիպրոս կը բնակիք եւ հիւանդանոցի քարդ ունիք, քանի մը օրէն կը ստանաք ձեր ապահովագրութեան քարդը: Իւրաքանչիւր անդամ իր անձնական քարդը պէտք է ունենայ: Քարդը սովորաբար քանի մը ամսուայ կամ մէկ տարուայ տեւողութեամբ կը տրուի:

Այս քարդէն կրնաք օգտուիլ «Եւրոպական Խորհուրդ»ի անդամ երկրի մը մէջ այցելութեան ընթացքին, անակնկալ անհանգստութեան մը կամ արկածի մը պարագային, երբ կ'այցելէք տեղւոյն կառավարական հիւանդանոցը դարմանումի համար:

Այս ստիպողական դարմանումի համար չնչին գումար մը կը վճարէք: Մնացեալը՝ Կիպրական կառավարութիւնը կ'ամբողջացնէ:

***Չանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Առողջապահութեան Նախարարութեան***

***հեռ. 22-605300, 22-605465, հեռ. 22-605473***

#### **4. Ներքին Գործոց Նախարարություն**

##### **ա. Քաղաքաշինության եւ բնակության բաժանմունք**

Բոլոր տեղահան թոշակառուներուն, որոնք կառավարական բնակարաններու մէջ կը բնակին, շէնքերուն սովորական նորոգութիւններէն եւ լաւ վիճակի մէջ պահելու աշխատանքներէն զատ, որոնք կը կատարուին բոլոր տեղահաններուն համար, հետեւեալները ի զօրու են.-

1) Յատակագիծ եւ նիւթական օգնութիւն կը տրուի գետնայարկի երկրորդ լուացարանի մը կառուցման համար, եթէ չկայ (երկյարկանի բնակարաններու պարագային):

2) Խոհանոցներու սարքաւորումի եւ ննջասենեակներու պահարանները կամ անվճար կը նորոգուին եւ կամ ալ անոնց տեղը նորեր կը գետեղուին:

***Ծանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել քաղաքաշինության եւ բնակության բաժանմունքին հեռ. 22-408000***

##### **բ. Տեղահաններու եւ վնաս կրողներու օգնության սպասարկութիւն**

Չետեւեալ չորս ծրագիրներու միջոցաւ, տարեց տեղահաններու կամ վնաս կրողներու օժանդակութիւն կը տրուի որպէսզի բնակարան ունենան.-

1) Կեցութիւն կառավարական բնակարաններու մէջ

2) Տունի կառուցում՝ անձնական հողամասի մէջ

- 3) Տունի կառուցում՝ կառավարական հողամասի մեջ  
 4) Յարկաբաժին կամ տուն գնելու

***Ծանոթ:*** *Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել տեղահաններու եւ վնաս կրողներու օգնութեան սպասարկութեան հեռ. 22-302081: Սպասարկութիւն Նաեւ Կիպրոսի այլ քաղաքներ (Լիմասոլ եւ Փաֆոս) հեռ. 25-305369*

#### **գ. Տեղահաններու եւ հայրենադարձներու վարձքի նպաստ**

Տեղահաններու եւ հայրենադարձներու վարձքի նպաստը իրենց ընտանիքին անդամներուն թիւէն եւ իրենց տարեկան զուտ եկամուտէն կախում ունի. մինչ հայրենադարձներուն պարագային՝ եկամուտը նկատի չ'առնուիր, բայց նպաստը իրենց վերադարձէն սկսեալ կը տեւէ մէկ տարի:

Նպաստը ամիսը Եւրօ 63ի եւ Եւրօ 126ի միջեւ է:

***Ծանոթ:*** *Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Ներքին Գործոց Նախարարութիւն հեռ. 22-871835*

## 5. Կրթական եւ Մշակութային Նախարարութիւն

### **ա. Չարգացման կեդրոններ**

1) «Յկեանս Չարգացում»ի ծիրէն ներս, Չարգացման Կեդրոնները յատկապէս ծրագրուած ուսումի նիւթեր, ձրիաբար կ'առաջարկեն տարեց թռչակառուններուն, որոնք 65 տարեկանէն վեր են: Հետաքրքրուող անձերը առիթը կ'ունենան հետեւելու իրենց սիրած նիւթերուն: Այս ձեւով կը ճոխացնեն իրենց գիտելիքները եւ իրենց ազատ ժամերը կ'անցնեն զիրենք հետաքրքրող նիւթերով:

2) Չարգացման Կեդրոններուն եւ նախակրթարաններուն գործակցութեամբ դասախօսութիւններ կը տրուին տարեցներուն:

3) Աշակերտներու եւ տարեցներու փոխ-յարաբերութիւն

- Նախակրթարանի աշակերտներ այցելութեան կ'երթան տարեցներուն, որոնք իրենց կարգին կ'այցելեն նախակրթարաններ

- Դպրոցներէն ներս ելոյթներ կը կազմակերպուին տարեցներուն համար

- Մանուկներ յայտագիրներ կը կազմակերպեն, տարեցները զուարճացնելու համար, թէ դպրոցէն ներս եւ թէ տարեցներուն կեցութեան վայրը: Ընդհանուր առմամբ մանուկները հասկացողութեան կապեր կը մշակեն «երրորդ տարիք»ի անձերուն հետ:

**Ծանոթ:** *Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել «Չարգացման Կեդրոններու Գրասենեակ», Նիկոսիա հեռ. 22-800800*

**բ. Մշակութային սպասարկութիւն**

1) Չեղչուած գինով տոմսակներ Կրթական եւ Մշակոյթի Նախարարութեան, մշակութային սպասարկութեան բոլոր ձեռնարկներուն:

2) Թշուառութեան մէջ գտնուող մտաւորական եւ գեղարուեստի մշակներուն նիւթական օժանդակութիւն (ամսական 375.89 եւրօ նպաստ 65 տարեկանէն վեր մշակոյթի ծառայող անձերուն):

3) 63 տարեկանէն վեր, կարելոր ստեղծագործութիւններ կատարած մշակոյթի ծառայողներուն պատույ թոշակ տրամադրել:

**Ծանոթ:** *Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Կրթական եւ Մշակոյթի Նախարարութեան, Մշակութային Սպասարկութիւն հեռ.22-800933*

## **6. Պաշտպանության Նախարարություն**

1) Անվճար բժշկական խնամք կը տրուի վեթերան մնայուն զինուորներուն, բանակին Չինուորական հիւանդանոցին մէջ:

2) Բանակի Սպաներու Ակումբներէն ներս վերոյիշեալները զեղչուած գինով ճաշելու իրաւունք ունին:

***Ծանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Պաշտպանության Նախարարութեան, Նիկոսիա հեռ. 22-807540***

## **7. Մարդասիրական Հարցերու Խնամատարի Գրասենեակ**

1) Պատերազմի զոհերուն (մեռեալներուն-նահատակուածներուն) կամ անհետ կորսուածներու ծնողներուն եւ անոնց կողակիցներուն, անկախ անոնց տարիքէն, յատուկ ամսական թոշակ կը տրուի:

2) Վերոյիշեալներուն նպաստ կը տրուի ակնոց գնելու (մինչեւ 83.43 էւրօ երեք տարուան համար) եթէ Ընկերային Ապահովագրութեան կամ Ընկերային Ֆոնտէն (հիմնադրամէն) ծերութեան կամ այրիութեան թոշակի իրաւունք ունին:

3) Պատերազմի զոհերուն կամ անհետ կորսուածներու այրիներուն, որոնք Ընկերային Ապահովագրութեան Հիմնադրամէն այրիութեան կամ ծերութեան թոշակ չեն ստանար կամ պակաս գումար կը ստա-

նան, մասնաւոր յատկացում կը տրուի, Վնաս Կրողներու Օգնութեան Յանձնախումբին կողմէ:

***Ծանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Մարդասիրական Հարցերու Խնամատարի Գրասենեակ, Նիկոսիա հեռ. 22-304700***

## **8. Կիպրոսի Ըաղաքապետներու Միութիւն**

1) Զեղչ՝ աղբեր հաւաքելու տուրքի.- Զանազան գեղչեր, կախում ունի անձի մը եկամուտէն (թոշակ եւ այլ հասոյթներ):

Ըաղաքապետարաններու մեծամասնութիւնը, ցած թոշակ ստացողներէն (ընդհանրապէս 256.29 եւրոյէն պակաս) կամ 75 տարեկանէն վեր եղողներէն վերոյիշեալ տուրքը չի պահանջեր (եթէ իրենց տարեկան եկամուտը 10,251.61 եւրոյէն պակաս է):

Փարալիմնիի եւ Այիա Նաբայի պարագային, այս տուրքէն զերծ են բոլոր հանգստեան թոշակ ստացողները, որոնք 65 տարեկանէն վեր են:

2) Պտոյտներու կազմակերպութիւն Կիպրոսի մէջ.- Գրեթէ բոլոր քաղաքապետարանները, տարեկան պտոյտներ կը կազմակերպեն դեպի Կիպրոսի զանազան վայրերը, փափաքող քաղաքացիներուն համար, ստանձնելով պտոյտի լման ծախսը (փոխադրութիւն, նախաճաշ, կէսօրուան ճաշ):

Որոշ քաղաքապետարաններ ալ կ'օժանդակեն տարեցներու կազմակերպուած խմբային պտոյտներուն, Կիպրոսէն ներս կամ դուրս:

3) Զեռնարկներու կազմակերպում.- Շատ մը քաղաքապետարաններ, տարեցներու յատուկ զանազան մշակութային եւ ընկերային ձեռնարկներ կը կազմակերպեն, կարգ մը տօներու եւ այլ առիթներով:

4) Տարեցներու Ակումբ.- Որոշ քաղաքապետարաններ տարեցներուն ակումբներ կը տրամադրեն, ուր զանազան ծառայութիւններ եւ դիւրութիւններ կ'ընծայուին անոնց:

5) Խնամք տուններէն ներս.- Կարգ մը քաղաքապետարաններ, իրենց ընծայած ծառայութիւնով եւ իննամբով զօրավիգ կը կանգնին այն տարեցներուն, որոնք օգնութիւն չունին իրենց հարազատներէն եւ որոնք առողջութեան առժամեայ կամ մնայուն դժուարութիւններ ունին: Այս ձեւով կարելիութիւնը կը տրուի անոնց, որպէսզի իրենց միջավայրին մէջ մնան եւ աւելի բարձր որակի կեանք մը վայելեն:

## **9. Կիպրոսի Զամայնքներու Միութիւն**

1) Աւելի ցած տուրքեր (աղբի հաւաքումի, ընկերային ծառայութիւններու եւայլն):

2) Օգնութիւն տարեցներու թղթակցութեան (սամակներու գրութիւն, ընթերցում եւ բացատրութիւն) նաեւ հարկ եղած ուղղութիւնները տալ, որպէսզի պատշաճ քայլերը առնեն երբ պաշտօնական շրջաբերականներ կամ գրութիւններ ստանան:

3) Իրենց վերաբերեալ պետական դիմումնագիրները (ֆորմաները) ամբողջացնել:

4) Օգնութեան հասնիլ երբ Զամայնքային դեղարան կը գտնուին, որպէսզի անհրաժեշտ դիմումնա-

գիրները (ֆորմաները) լրացնեն եւ հարկ եղած դեղերը հայթայթուին:

5) Տարեցներու մասնայատուկ դժուարութիւնները, Պետական Սպասարկութիւններուն փոխանցել:

6) Տարեցներու ի պատիւ ձեռնարկներ կազմակերպել, ինչպէս նաեւ պտոյտներ՝ ձրի ճաշերով եւ ընթրիքներով:

**Ծանօթ: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Կիպրոսի Համայնքներու Միութեան  
Հեռ. 22-672576**

### Կարելոր նշում

Տարեց անձերու հեռաձայնի վարձքի ամսական գումարը կը գեղջուի, եթէ Ընկերային Ապահովագրութեան գրասենեակէն ձեր ստացած գումարով նամակ մը ներկայացնէք հեռաձայնի կեդրոն եւ ամբողջացնէք դիմումնագիր մը:

## 10. Կարելոր Զեռաձայններու Թիւեր

- Անհրաժեշտ թիւ մը ունենալու համար կրնաք հեռաձայնել 11892
- Ստիպողական կացութեան պարագային կրնաք հեռաձայնել 112
- Երրոպական Միութեան բոլոր պետութիւնները ստիպողական կացութեան համար մէկ թիւ ունին՝ 112

Այս թիւը կ'օգտագործէք.-

1. լուրջ արկածի մը
2. հրդեհի մը կամ
3. անակնկալ արկածի մը պարագային

Այս թիւին հեռաձայն ընելը անվճար է, ըլլայ բջիջային, տունի կամ հանրային վճարումով հեռաձայնէ մը հեռաձայնելու պարագային:

Կիպրոսի մէջ Յունարէն կամ Անգլերէն կը խօսին պաշտօնեաները, առաւել արձանագրուած թիւերը դարձեալ այդ երկու լեզուներով կ'ըլլան:

Կրնաք նաեւ հեռաձայնել 199, հրդեհի պարագային, ոստիկանութեան կամ եթէ հիւանդակառքի (ambulance) պէտք ունենաք:

**Հիւանդանոցներ**

Տեղեկութիւն	1400
<b><i>Նիկոսիա</i></b>	
- Նոր հիւանդանոց	22-603000
- Հին հիւանդանոց	22-801400
- Մակարիոս հիւանդանոց	22-405000
<b><i>Լիմասոլ</i></b>	
- Նոր հիւանդանոց	25-801100
- Հին հիւանդանոց	25-305333
<b><i>Լառնաքա</i></b>	
- Նոր հիւանդանոց	24-800500
- Հին հիւանդանոց	24-304312
Փաֆոսի հիւանդանոց	26-803100
Փարալիմնիի հիւանդանոց	23-821211

Ազգային Առաջնորդարան

22-493560 / 22-493581

Նիկոսիա - Տէր Մովսիկ Քիւյ. Հապէշեան

99-307966

Լառնաքա - Տէր Մաշտոց Քիւյ. Աշգարեան

99-465818

Անահիտ Էսքիճեան - Տարեցներու երեսփոխան

99-555373

Էլսի Իւթիւճեան - Տարեցներու փոխ-երեսփոխան

22-773085

